# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-5

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար համակարգիչների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 02.11.2018թ. N 313/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 23.11.2018թ. ժամը 14-30-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ.Դուրգարյանը, գնահատող հանձնաժողովի անդամ Գ.Ստեփանյանը և քարտուղար Գ.Ղազարյանը: Բացակայում էր հանձնաժողովի անդամ Գ.Գալստյանը:

**Օրակարգ**
**Հայտերի գնահատման մասին**

-Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով առաջին տեղը զբաղեցրած «Լանար Սերվիս» ՍՊԸ-ի կողմից գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգով ներկայացված փաստաթղթերը արձանագրեց, որ «Լանար Սերվիս» ՍՊԸ–ն համակարգով չի ներկայացրել <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև հավելված N 3-ով իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում չի նշել, որ «Լանար Սերվիս» ՍՊԸ-ն ապրանքի մատակարարման ժամանակ կներկայացնի արտադրողի լիազորագիր (MAF):
-Համաձայն ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/4 ծածկագրով գնման ընթացակարգի 7.16 կետի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:
ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/4 ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և համակարգի միջոցով ծանուցել «Լանար Սերվիս» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:
Հաջորդ նիստը հրավիրել 2018թ. նոյեմբերի 27-ին, ժամը 10:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ.Դուրգարյան

Անդամներ՝ Գ.Ստեփանյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան